ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

Քյոլնի Սանկտ Պանթալեոն եկեղեցում Ռուս և Հայ Եկեղեցիների հոգևորականները հոգեհանգիստ կատարեցին հայազգի Թեոֆանու կայսրուհու շիրիմի առջև: Տ. Մյուռոն քհն. Սարգսյանը խոսեց 1700-ամյա քրիստոնեության դերի մասին Հայաստանում՝ ընդգծելով կայսրուհու դերը Եվրոպայում էկումենիկ շարժման գործում:

Ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի, 2001 թվականի ապրիլի 22-ին Հայ Եկեղեցու Բեռլինի համայնքի «Հայ Տան» մեջ «Թուրքիայի կրոնական կազմակերպությունները, ինչպես նաև գերմանական եկեղեցիները և Հայոց ցեղասպանությունը» թեմայով բանախոսեցին Գերմանիայի Գյոթինգեն քաղաքի Աստվածաբանության ֆակուլտետի պրոֆեսորներ, դոկտ. Հերման Գոլցը և Մարթին Թամքը: Պրոֆ. Թամքը արևելյան Եկեղեցիների աստվածաբանության մասնագետ է և Գերմանիայում բազմաթիվ բանախոսություններով ներկայացրել է Հայ Եկեղեցին և նրա բազմադարյան մշակույթը: Նա հեղինակն է նաև «Արմին Թ. Վեգները և հայերը» գրքի:

2001 թվականի ապրիլի 24-ին Բեռլինի Լուիզըն եկեղեցում հոգեհանգստյան պաշտոն կատարեց Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի: Այնուհետև «Հայ Տան» մեջ «Կիլիկիայի փրկված գանձերը» թեմայով հանդես եկավ Հալլեի համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի ղեկավար և «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի տնօրեն, պրոֆ., դոկտ. Հերման Գոլցը:

Այնուհետև ուշագրավ խոսք արտասանեց Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը՝ անդրադառնալով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման վերջին շրջանի հաջողություններին:

2001 թվականի մայիսի 27-ին Հայ Եկեղեցու Բեռլինի համայնքում նշվեց Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման 83-րդ տարեդարձը: Այս առթիվ Լուիզըն եկեղեցում Տ. Սերեվբե վրդ. Իսախանյանը, ներկայությամբ ՀՀ դեսպան Աշոտ Ոսկանյանի, կատարեց Հանրապետական մաղթանք:

Արարողությունից հետո «Հայ Տան» մեջ «Ժամանակակից հայ գրականությունը» թեմայով բանախոսեց Գերմանա-հայկական ընկերության նախագահ, դոկտ. Ռաֆֆի Քանդյանը:

Բանախոսության ավարտից հետո «Մեր Հայրենիք» և «Մարդարապատ» երգերի կատարումով հանդես եկավ համայնքի երիտասարդաց նորակազմ երգչախումբը՝ ղեկավարությամբ օրիորդ Մարո Հայքայի: